ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-548-18.06.2014-ՊԱ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 21-րդ հոդվածը լրացնել նոր մասով հետևյալ բովանդակությամբ.

«Այն դեպքերում, երբ ճանապարհային երթևեկության կանոնի խախտումն ամրագրվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգը կարող է կիրառվել նաև վերադասության կարգով բողոքարկման վարույթի ընթացքում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 124-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող գծանշումների չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով».

2) 11-րդ մասում «եռապատիկի» բառը փոխարինել «հնգապատիկի» բառով.

3) 23-րդ մասում «քառասնապատիկի» բառը փոխարինել «քսանապատիկի» բառով.

4) 24-րդ մասում «կանգառ կատարելը» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետի տարածքում կայանելը՝» բառերը.

5) 25-րդ մասից հանել «, ինչպես նաև ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետի տարածքում կայանելը» բառերը, ինչպես նաև «տասնապատիկի» բառը փոխարինել «հնգապատիկի» բառով.

6) 26-րդ մասում «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնհինգապատիկի» բառով.

7) 28-րդ մասում «հնգապատիկի» բառը փոխարինել «յոթապատիկի» բառով:

Հոդված 3. Օրենսգրքի 124.4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 124.4. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից սահմանված արագությունը գերազանցելը**

1. Երթևեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար նվազագույն աշխատավարձի չափով:

2. Երթևեկության սահմանված արագությունը 11-30 կմ/ժ-ով գերազանցելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար նվազագույն աշխատավարձի 150 տոկոսի չափով.

3 Երթևեկության սահմանված արագությունը 31-50 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

4.Երթևեկության սահմանված արագությունը 51-80 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

5. Երթևեկության սահմանված արագությունը 81կմ/ժ և ավելի գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

6. Սույն հոդվածի 1-5-րդ մասերով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժ նշանակելիս որոշում կայացնող մարմինը (պաշտոնատար անձը) արագաչափ սարքի արձանագրած ցուցանիշից պարտավոր է հանել 10 կմ/ժ՝ արագաչափ սարքի հնարավոր սխալանքի համար:»:

Հոդված 4. Օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասում «առաջին կամ երկրորդ» բառերը փոխարինել «առաջին, երկրորդ կամ չորրորդ» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 128-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասից հանել «կամ ուժը կորցրած վարորդական վկայականով կամ ուժը կորցրած այլ փաստաթղթերով» բառերը, ինչպես նաև «հնգապատիկի» բառը փոխարինել «եռապատիկի» բառով.

2) 4-րդ մասում «Հայաստանի Հանրապետության» բառերից առաջ լրացնել «Ուժը կորցրած վարորդական վկայականով կամ ուժը կորցրած այլ փաստաթղթերով տրանսպորտային միջոցներ վարելը,» բառերով, ինչպես նաև «տասնհինգապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով:

Հոդված 6. Օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասում ***«վարելու իրավունք չունեցող անձանց» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ուժը կորցրած վարորդական վկայականով»***

բառերը, «քսանապատիկի» բառը փոխարինել ***«հիսնապատիկի»*** բառով և հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ մասով.

«6. Սույն հոդվածի առաջինից չորրորդ մասերով նախատեսված արարքները վարչական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում երրորդ և ավելի անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքների համար սահմանված տուգանքի եռապատիկի չափով:»:

Հոդված 7. Օրենսգրքի 135.2-րդ հոդվածի 2-րդ մասում «հնգապատիկի» բառը փոխարինել «քսանապատիկի» բառով:

Հոդված 8. Օրենսգրքի 140-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5.Առանց համապատասխան թույլտվության կանգնակների, արգելապատնեշների կամ այլ պարագաների միջոցով երթևեկելի մասը սահմանափակելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ սահմանափակող իրերի և առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:»:

Հոդված 9. Օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից կամ տուգանքը նշանակելու մասին որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում կամ տուգանքը տարաժամկետելու մասին դիմումում նշված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում փաստացի չվճարված տուգանքի չափը ավելանում է 25 տոկոսով:

Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից կամ տուգանքը նշանակելու մասին որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից 60 օրվա ընթացքում կամ տուգանքը տարաժամկետելու մասին դիմումում նշված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում փաստացի չվճարված տուգանքի չափը ավելանում է 50 տոկոսով, որը ենթակա է հարկադիր կատարման կարգով բռնագանձման:»:

Հոդված 10. Օրենսգրքի 310-րդ հոդվածի հինգերորդ պարբերությունում «123^2» թիվը փոխարինել «140» թվով:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունների

հ/հ	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Ծանոթություն, կատարված փոփոխությունները
1	*2*	*3*	*4*	*5*
1.	ՀՀ կառավարություն Խոսրով Հարությունյան Արայիկ Հովհաննիսյան (պատգամավորների կողմից առաջարկությունը ներկայացվել է 1-ին ընթերցմամբ քննարկման ժամանակ)	Օրենքի նախագծի 6-րդ հոդվածով փոփոխվող գործող օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասով պատասխանատվություն նախատեսել նաև ուժը կորցրած վարորդական վկայականով վարել թույլ տալու համար, ինչպես նաև խստացնել պատասխանտվությունը:	Ընդունվել է	Օրենքի նախագծի 6-րդ հոդվածը խմբագրվել է. «**Հոդված 6**. Օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասում ***«վարելու իրավունք չունեցող անձանց» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ուժը կորցրած վարորդական վկայականով» բառերը,*** «քսանապատիկի» բառը փոխարինել ***«հիսնապատիկի»*** բառով և հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ մասով. «6. Սույն հոդվածի առաջինից չորրորդ մասերով նախատեսված արարքները վարչական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում երրորդ և ավելի անգամ կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքների համար սահմանված տուգանքի եռապատիկի չափով:»:»